վաստման ուղղությամբ տարվող աշխատանքները և իրականացնում է ոլորտին վերաբերող այլ գործառույթներ:

Կոնտակտներ.
Տեխնիկական նորմավորման և ստանդարտացման բաժին, **հեռ.՝ 580803:**

է) Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության հարցերով զբաղվում է Քաղաքաշինական պետական տեսչությունը, որը ՀՀ Քաղաքաշինության նախարարության առանձնացված ստորաբաժանում է, քաղաքաշինության բնագավառում իրականացնում է վերահսկողական գործառույթներ և կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Քաղաքաշինական պետական տեսչությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) քաղաքաշինության վարչություններում, մարզային ենթակայության ձեռնարկություններում ու կազմակերպություններում ստուգում է իրականացվող քաղաքաշինական գործունեության՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տալու, շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության համաձայնեցման, հաստատման ու փոփոխման գործընթացի, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման գործընթացի, շինարարության (քանդման) թույլտվության առկայությունը և տրման կարգի, ինչպես նաև ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, ստուգումների անցկացումը շինարարական օբյեկտներում՝ աշխատանքներ իրականացնող սուբյեկտների գործունեությունը վերահսկելու, իրականացվող շինարարության որակը, քաղաքաշինական փաստաթղթերի, իրավական ակտերի և նորմատիվատեխնիկական պահանջների համապատասխանությունն ապահովելու նպատակով և այլն:

Կոնտակտներ.
Քաղաքաշինության տեսչության պետ, **հեռ.՝ 529713,**
Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի վերահսկողության բաժնի պետ, **հեռ.՝ 528605,**
Քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժնի պետ, **հեռ.՝ 560051,**
Ընդհանուր վերահսկողության բաժնի պետ, **հեռ.՝ 583303,**
Վերլուծական բաժնի պետ, **հեռ.՝ 560051:**
Տարածքային մարմիններ.
Երևանի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ 262530,**
Արարատի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0235) 23889,**
Արմավիրի տարածքային բաժնի պետ, **հեռ՝ (0232) 50351,**
Արագածոտնի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (091) 201369,**
Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0261) 24178,**
Լոռու տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0322) 42623,**
Կոտայքի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0222) 22454,**
Շիրակի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0312) 33300; 33868,**
Սյունիքի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0285) 64399,**
Վայոց Ձորի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (028151) 25028,**
Տավուշի տարածքային բաժնի պետ, **հեռ.՝ (0263) 35688:**

Քաղաքաշինության նախարարության համակարգում գործում են նաև՝
Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունը, **հեռ.՝ 520243,**
Իրավաբանական վարչությունը, **հեռ.՝ 520298,**
Գործերի կառավարման վարչությունը, **հեռ.՝ 565047,**
Անձնակազմի կառավարման բաժինը, **հեռ.՝ 564356,**
Ընկերությունների աշխատանքների համակարգման և մասնավորեցման բաժինը, **հեռ.՝ 527375,**
Քարտուղարությունը, **հեռ.՝ 523200:**

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերում է քաղաքաշինության բնագավառում պետության կողմից մատուցվող հանրային ծառայություններին: Այն համառոտ տեղեկատվություն է պարունակում ՀՀ Քաղաքաշինության նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործառույթների, ինչպես նաև հեռախոսահամարների վերաբերյալ:

Մայիս, 2005

Քաղաքաշինության ոլորտում գործառույթներ իրականացնող պետական կառավարման հանրապետական մարմինը ՀՀ Քաղաքաշինության նախարարությունն է, որը կոչված է իրականացնելու քաղաքաշինության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քաղաքաշինության նախարարության նպատակներն ու խնդիրներն են.

ա) ՀՀ սոցիալ-տնտեսական համալիր ծրագրերի շրջանակներում քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, տարածքների ինժեներական պաշտպանության, բնակարանային կոմունալ տնտեսության, տարածքային հատակագծման և տարաբնակեցման համակարգերի ձևավորման, տարածքների պլանավորման և զարգացման, դրանց նպատակային օգտագործման ուղղությունների և գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներատրանսպորտային և այլ ենթակառուցվածքների կազմակերպման ոլորտներում հեռանկարային զարգացման ծրագրերի և պետական քաղաքականության մշակման ապահովումը,

բ) քաղաքաշինական, ճարտարապետական, շինարարական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի (շինարարական նորմեր, ստանդարտներ, հրահանգներ և այլն) մշակումն ու սահմանված կարգով հաստատումը (բացի ազգային ստանդարտներից),

գ) բնակավայրերի կայուն զարգացման քաղաքականության մշակումը,

դ) քաղաքաշինության բնագավառում գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը,

ե) ՀՀ տարածքում սեյսմակայուն շինարարության իրականացման նպատակով կատարվող ինժեներահետազննական, տարածքների ինժեներական պաշտպանության, շահագործվող շենքերի ու կառուցվածքների (այդ թվում՝ ինժեներական) տեխնիկական վիճակի ուսումնասիրման, վկայագրավորման (անձնագրավորման) ուղղությամբ կատարվող աշխատանքների կազմակերպման ու համակարգման ապահովումը և օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների իրականացումը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Այդ բնագավառներն են.

ա) քաղաքաշինության քաղաքականության և տարածքների պլանավորում,

բ) գիտատեխնիկական քաղաքականություն,

գ) բնակարանային և կոմունալ քաղաքականություն,

դ) շինարարության քաղաքականության և աղետի գոտու հարցեր,

ե) լիցենզավորում,

զ) տեխնիկական նորմավորում և ստանդարտացում,

է) քաղաքաշինության վերահսկողություն:

ա) Քաղաքաշինության քաղաքականություն և տարածքների պլանավորում:

Քաղաքաշինության քաղաքականության և տարածքների պլանավորման բնագավառով զբաղվում է համանուն վարչությունը, որի հիմնական խնդիրներն են քաղաքաշինության բնագավառի պետական քաղաքականության մշակումը, ոլորտի ներդրումների ներգրավմանը և դրանց պաշտպանությանը նպաստելը, առանձին ներդրումային ծրագրերի մշակումը, մրցակցային դաշտի ձևավորմանը նպաստելը, բնակավայրերի կայուն զարգացման քաղաքականության մշակումը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, **հեռ.՝ 561613,**
Ինժեներական ենթակառույցների և քաղաքաշինական կաղաստրի բաժին, **հեռ.՝ 520476,**
Տարածքների պլանավորման բաժին, **հեռ.՝ 520476,**
Արտաքին կապերի բաժին, **հեռ.՝ 520476:**

բ) Գիտատեխնիկական քաղաքականության հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որի հիմնական խնդիրներն են բնագավառին (այդ թվում՝ սեյսմակայուն շինարարությանը) վերաբերող կիրառական գիտական հետազոտությունների և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը, բնագավառին վերաբերող հարցերի գծով օտարերկրյա պետությունների հետ գիտատեխնիկական համագործակցության ծրագրերի մշակման ու իրականացման, միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման, տարածման ու ներդրման աշխատանքներին մասնակցելը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ՝ **հեռ.՝ 524700,**
Սեյսմակայուն շինարարության բաժին, **հեռ.՝ 524700,**
Տարածքների և կառուցվածքների ինժեներական հետազննության բաժին, **հեռ.՝ 524700:**

գ) Բնակարանային և կոմունալ քաղաքականության ոլորտով զբաղվում է համանուն վարչությունը, որն ապահովում է բնակարանային քաղաքականության (բնակարանային շինարարության)՝ բնակարանային տնտեսության մեջ առկա առանձին հիմնահարցերին վերաբերող ծրագրային փաստաթղթերի մշակումը և ներդրումը, իր իրավասության սահմաններում ապահովում է կոմունալ ոլորտի քաղաքականության մշակումը, ներդրումը և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, **հեռ.՝ 524680,**
Բնակարանային քաղաքականության բաժին, **հեռ.՝ 564896,**
Կոմունալ քաղաքականության բաժին, **հեռ.՝ 564316:**

դ) Շինարարության քաղաքականության և աղետի գոտու հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որը համակարգում է աղետի գոտու վերականգնման աշխատանքները, մասնակցում է աղետի գոտու վերականգնման ներդրումային ծրագրերի մշակման աշխատանքներին, մասնակցում է օտարերկրյա պետությունների և կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) հետ համատեղ աղետի գոտու վերականգնման շուրջ վարվող բանակցություններին և այլն:

Կոնտակտներ.
Վարչության պետ, **հեռ.՝ 564934,**
Շինարարության քաղաքականության բաժին, **հեռ.՝ 564785,**
Աղետի գոտու հարցերի բաժին, **հեռ.՝ 523727:**

ե) Քաղաքաշինության ոլորտի լիցենզավորման հարցերով զբաղվում է լիցենզավորման կենտրոնը, որը քաղաքաշինության բնագավառում տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը լիցենզավորող միակ մարմինն է: Քաղաքաշինության բնագավառում լիցենզիաները տրամադրվում են բարդ ընթացակարգով: Լիցենզիաների տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը (**տես՝ «Քաղաքաշինության բնագավառի գործունեության լիցենզավորման կարգը և դրա իրականացման համար ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրվող լիցենզիայի ձևը հաստատելու մասին ՀՀ կառավարության 21.11.2001թ.թիվ 1148 որոշումը**):

Կոնտակտներ.
Լիցենզավորման կենտրոն, **հեռ.՝ 520285; 587680:**

զ) Տեխնիկական նորմավորման և ստանդարտացման հարցերով զբաղվում է համանուն բաժինը, որը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպում է այդ բնագավառում տեխնիկական նորմավորման, ստանդարտացման և համապատասխանության հա-